2005, ՀՈԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 19 (207)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

## Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը նվիրված միջազգային գիտաժողովում

**Հոկտեմբերի 6-8-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հովանավորությամբ, իր աշխատանքը սկսեց Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը նվիրված միջազգային գիտաժողովը:**

**5-րդ դարում՝ հայոց գրերի գյուտից անմիջապես հետո, հայ թարգմանիչները ձեռնամուխ եղան Սուրբ Գրքի հայերեն թարգմանությանը, որ իիրավի համարվում է «թարգմանությունների թագուհի»: Հայոց գրերի գյուտի 1600-ամյա հոբելյանական տոնակատարությունների շրջանակում կազմակերպված այս գիտաժողովին մասնակցեցին Հայաստանի, ինչպես նաեւ ԱՄՆ եւ եվրոպական մի շարք հեղինակավոր համալսարանների մեկ տասնյակից ավելի գիտնականներ: Լսվեցին շուրջ 15 զեկուցումներ:**

**Մասնակիցներին իր օրհնությունը տվեց Ամենայն Հայոց Հայրապետը:**

*Գերաշնորհ, Հոգեշնորհ եւ Արժանապատիվ հայրեր, մեծարգո մասնակիցներ եւ հյուրեր, սիրով ողջունում ենք ձեզ եւ բերում Մեր օրհնությունն ու գնահատանքը, որ ընդունելով Մայր Աթոռիս հրավերը՝ ներկա եք այսօր այստեղ:*

*Մեզ համար հոգու առանձնակի խնդություն է Հայ Գրի 1600-ամյա հոբելյանի առիթով Աստվածաշնչի*



*հայերեն թարգմանությանը եւ հայ հոգեւոր գրական ժառանգությանը նվիրված միջազգային այս գիտաժողովի բացումը Սուրբ Էջմիածնի հարկի ներքո:*

*Մեր ժողովրդի քրիստոնեական կյանքի ու պատմության անբաժան մասն է կազմում այբբենական Հայ Գիրը, որն ստեղծվեց Աստվածաշունչը հայերենով ուսուցանելու նպատակով: Այդ մեծ նպատակի նախաձեռնողները՝ Սահակ Պարթեւ Կաթողիկոսը, Մաշտոց Վարդապետը եւ նրանց համամիտ ու գործակից Վռամշապուհ թագավորը, ջանքեր ներդրեցին աղոթքով ու այն հավատով, որ մայրենի լեզվով Աստծո Խոսքը առավել լսելի դառնալով ժողովրդին, գրվելով սրտերում ու հոգիներում՝ օրհնությամբ է լցնելու նրա կյանքը: Արդարեւ, հավատի լույսը առատորեն սփռվելով՝ աստվածճանաչ հոգու անհամար ու անգին պտուղներ պարգեւեց հայոց կյանքին՝ աստվածային շնորհ եւ օրհնություն դարձավ ուկեղարյան այդ օրերից ի վեր: Սկզբնավորվեց ու անընդմեջ ժառանգականությամբ 16 դարերի մեջ աղոթքով ու անձանձիր ջանքով ստեղծվեց հարուստ գրական ժառանգություն՝ սեփական եւ թարգմանական, գիտական ու գեղարվեստական:*

*Գիրն ու դպրությունը մեր ժողովրդի համար դարձան ճանապարհ նախ եւ առաջ Աստծո Խոսքին ունկնդիր լինելու, Աստծուն ճանաչելու եւ հավատի մեջ հաստատուն մնալու: Բնական է, որ Աստվածաշունչը, ինչպես ամենուր քրիստոնյա աշխարհում, հայ իրականության մեջ ամենաշատն էր ընդօրինակվում եւ հետո նաեւ՝ տպագրվում՝ ջանալով անխաթար պահպանել 5-րդ դարից ավանդված հայերեն «Թագուհի թարգմանությանց» Աստվածաշունչ Մատյանը: Հավատի լույսը, որ առատաբուխ ճառագում էր մեկնողական, ջատագովական, վարքագրական, այլեւ՝ պատմական ու բնագիտական-ճանաչողական, այլեւ՝ գեղարվեստական գրականությունից՝ մեր ժողովրդի համար եղավ նաեւ փրկության առագաստ՝ իր դժվարին պատմության փորձությունների մեջ ապրելու եւ վերածնվելու: Հայրենիքում ապրեց մեր ժողովուրդը, թե հալածանքներից սփռվեց այլ երկրներում, իր հավատով միշտ միասնական մնաց հայության հոգին, մնաց իր հողի հետ ու աստվածասեր հայրերի, մնաց փրկության հույսի ու հավատի հետ:*

*Մեզ համար մեծ ուրախություն է, որ գիտաժողովը անդրադառնալով Աստվածաշունչ Մատյանի հայերեն թարգմանության հարցերի, ինչպես եւ՝ մեր ժողովրդի հոգեւոր գրական ժառանգության տարբեր խնդիրների, մասնավորելով գիտական առումով դեռեւս չուսաբանված կողմերն այդ ժառանգության, մեկ անգամ եւս կարեւորելու է նրա հոգեւոր ու մշակութային արժեքն ու տեղը համաշխարհային մշակույթի ու պատմության մեջ: Մենք հավատում ենք, որ այս գիտաժողովի հրավիրումը հավատի նորոգության առիթ ու խրախույս է դառնալու եւ դառնալու է հրավեր՝ Աստվածաշունչ Մատյանը անաղարտ պահպանելու եւ սերունդներին փոխանցելու:*

*Գիտաժողովի սիրելի մասնակիցներ, բարի գալուստ ենք մաղթում ձեզ եւ հաջողություններ՝ գիտաժողովի աշխատանքներին: Գիտաժողովի կազմակերպման համար Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում Հոգեշնորհ Տ. Վահան Վարդապետ Հովհաննիսյանին եւ նրա բոլոր աջակիցներին:*

*Հայցելով բարեխոսությունը Սուրբ Սահակ եւ Սուրբ Մաշտոց մեր մեծ Ուսուցչապետերի, ոգեկոչելով անմահ հիշատակը հայ գրի ու դպրության նվիրյալների, մեր գրական ժառանգությունը կերտողների, աղոթք ենք բարձրացնում առ Փրկիչ Տերը մեր, որ Իր օրհնության ներքո պահպանի աշխարհը համայն եւ ազգս հայոց ու պարգեւի հավատի, հոգու եւ մտքի նոր արգասիքներ: Աղոթում ենք, որ Տերը բաջառողջ պահպանի բոլորիդ, շնորհներով զարդարյալ եւ օրհնի գիտական Ձեր ջանքերը՝ ի սեր մարդկանց ու Իր Սուրբ Անվան:*

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

***1 հոկտեմբերի***

### Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի գլխավորած պատվիրակությանը



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայերի համաշխարհային կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանին եւ նրա գլխավորած պատվիրակությանը՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանի ուղեկցությամբ:

«... Վերջին հինգ տարիներին գեղեցիկ ավանդույթ է դարձել ամեն տարի Ռուսաստանի հայերի միության նախագահ եւ ազգային բարերար Արա Աբրահամյանի նախաձեռնությամբ միության անդամների այցելությունը Մայր Հայաստան եւ Արցախ, ապա՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ ստանալու Ձերդ Սրբության Հայրապետական օրհնությունը եւ զորանալու Ձեր պատգամով»,- ասաց Եզրաս Սրբազանը:

Վեհափառ Հայրապետին ողջույնի խոսքով դիմեց նաեւ Հայերի համաշխարհային կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը՝ ներկայացնելով նաեւ միության կողմից կատարվող աշխատանքները եւ գործունեության արդյունքները, միաժամանակ կարեւորելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դերը հայ ժողովրդի կյանքում:

Այնուհետեւ միության անդամներին իր գնահատանքի եւ օրհնության խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հանդիպման ընթացքում ՌԴ Անվտանգության, պաշտպանության եւ իրավապահության խնդիրների ակադեմիայի փոխնախագահ Վ. Իվլիեւը Ակադեմիայի Սբ. Ալեքսանդր Նեւսկու առաջին կարգի շքանշանը հանձնեց Նորին Սրբությանը՝ ի գնահատություն հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում ունեցած մեծ նպաստի:

***2 հոկտեմբերի***

### Բելառուսի Մշակույթի նախարարին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բելառուսի մշակույթի նախարար Լեոնիդ Գուլյակոյին եւ նրա գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Գագիկ Գյուրջյանի եւ երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Ողջունելով նախարարի այցը Մայր Աթոռ՝ Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակություն հայտնեց Հայաստանում անցկացվող Բելառուսի մշակույթի օրերի առիթով՝ կարեւորելով մշակութային նման ձեռնարկների կազմակերպումը, որոնք նպաստում են երկու ժողովուրդների միջեւ տասնամյակներ շարունակ ձեւավորվող հարաբերությունների եւ ավանդությունների առավել սերտացմանն ու ամրապնդմանը: Նորին Սրբությունն այս ամենում կարեւորեց երկու դեսպանների դերն ու առաքելությունը:

Իր հերթին պրն. Գուլյակոն անդրադարձավ Հայաստանում ցուցաբերված ջերմ ընդունելությանը, ներկայացրեց Հայաստանում Բելառուսի մշակույթի օրերի ծրագրի շրջանակներում կատարված եւ նախատեսվող միջոցառումները: Նախարարը նաեւ ուրախությամբ նշեց, որ եկող տարի Բելառուսում անցկացվելու են Հայաստանի մշակույթի օրեր:

Հանդիպման ընթացքում նաեւ անդրադարձ եղավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առջեւ ծառացած դժվարություններին եւ երկու Եկեղեցիների միջեւ առկա ջերմ հարաբերություններին:

Տես՝ էջ 2

# ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ էջ 1*

***4 հոկտեմբերի***

## «Հակազդեցություն միջուկային եւ ռադիացիոն ահաբեկչությանը» թեմայով սեմինարի մասնակիցներին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՆԱՏՕ-ի «Գիտություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում Առաջավոր գիտությունների տեխնոլոգիաների կենտրոնի կազմակերպած «Հակազդեցություն միջուկային եւ ռադիացիոն ահաբեկչությանը» թեմայով սեմինարի մասնակիցներին:

## Հունաստանի պաշտպանության նախարարին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց երկօրյա պաշտոնական այցով Հայաստան ժամանած Հունաստանի ազգային պաշտպանության նախարար Սպիլիոս Սպիլիոտոպուլոսի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ ՊՆ փոխնախարար գեներալ-լեյտենանտ Արթուր Աղաբեկյանի եւ ՀՀ բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Նորայր աբղ. Սիմոնյանի ուղեկցությամբ:

Ողջունելով հյուրերի այցը Մայր Աթոռ՝ Ամենայն Հայոց Հայրապետն ուրախություն հայտնեց Հայաստանի եւ Հունաստանի պաշտպանության նախարարությունների միջեւ զարգացող գործընթացների ու ջերմ հարաբերությունների համար:

Իսկ նախարարն էլ իր հերթին նշեց հայ-հունական հարաբերությունների առավել զարգացման հեռանկարների, ինչպես նաեւ տարածաշրջանային խնդիրների լուծման մասին:

Վեհափառ Հայրապետը պրն. Սպիլիոտոպուլոսի միջոցով նաեւ իր եղբայրական ջերմ ողջույնները փոխանցեց Աթենքի եւ Համայն Հունաստանի արքեպիսկոպոս Քրիստոդուլոսին:

***5 հոկտեմբերի***

## Լիտվիայի Սահմանադրական դատարանի նախագահին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիտվիայի Սահմանադրական դատարանի նախագահ Էգիդիոս Կուրիսի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու երկրների սահմանադրական դատարանների սերտ համագործակցության մասին: Անդրադարձ եղավ նաեւ Հայ Եկեղեցու ներկայիս գործունեությանը:

***7 հոկտեմբերի***

## Հնդկաստանի փոխնախագահին



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Հնդկաստանի փոխնախագահ Բհարիոն Սինգհ Շեխավատին՝ ՀՀ ԱԺ փոխնախագահ Վահան Հովհաննիսյանի, Հնդկաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Քոչարյանի եւ ՀՀ-ում Հնդկաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Դիպակ Վոհրայի ուղեկցությամբ:

*«Ուրախ եմ, որ ձեր այցը այստեղ բավականին խանդավառություն եւ ուրախություն է ստեղծել, որովհետեւ ձեր այցով վերանորոգվում են երկու ժողովուրդների միջեւ ձեւավորված պատմական բարի հարաբերությունները, որոնց վկայությունն այսօր Հնդկաստանում գտնվող հայոց եկեղեցիները, Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը եւ բազում այլ հիշատակություններն են»*,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը՝ ուրախություն հայտնելով երկու պետությունների միջեւ տնտեսության, կրթության եւ մշակույթի ոլորտներում զարգացող սերտ համագործակցության առիթով:

Իր հերթին Բհարիոն Սինգհ Շեխավատին, ուրախություն հայտնելով հնագույն քրիստոնյա երկրում գտնվելու առիթով, նաեւ շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ կործանարար ցունամիի հետ կապված՝ Նորին Սրբության կարեկցանքի եւ մխիթարանքի խոսքերի համար:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

***12 հոկտեմբերի***

## Կրասնոդարի նահանգապետին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի նահանգապետ Ալեքսանդր Տկաչովի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ ոստիկանության պետ Հայկ Հարությունյանի եւ ՀՀ ԱԳ փոխնախարար Գեղամ Ղարիբջանյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը, կարեւորելով նման հանդիպումները, իր գոհունակությունը հայտնեց նահանգապետին՝ հայ ժողովրդի զավակների հանդեպ դրսեւորվող բարյացակամ վերաբերմունքի համար: Վեհափառ Հայրապետը նկատել տվեց, որ տարածաշրջանում երբեմն տեղ գտնող անցանկալի միջադեպերը սխալ ընկալումների դրսեւորումներ են եւ տեղ չունեն երկու ժողովուրդների դարավոր բարեկամության ճանապարհին:

Իսկ նահանգապետը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, անդրադարձավ երկուստեք հուզող խնդիրներին: Օգտվելով ընձեռված հնարավորությունից՝ նահանգապետը Նորին Սրբությանը հրավիրեց պաշտոնական այցով լինել Կուբանում:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջեւ առկա ջերմ հարաբերություններին: Հանդիպմանը ներկա էր Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մովսես եպս. Մովսիսյանը:

***14 հոկտեմբերի***

## Ուկրաինայի նորանշանակ դեսպանին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ուկրաինայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեքսանդր Բոժկոյին:

«Ուրախ ենք, որ Հայաստանում եք կրկին դեսպանի հանգամանքով եւ ձեր ծառայությունը շարունակելու եք բերել մեր երկու ժողովուրդների եւ պետությունների սերտ համագործակցությանը, բարեկամական կապերի զորացմանը: Հաճելի է, որ այդ առաքելությունը Դուք եք շարունակելու՝ լինելով մեր ժողովրդի ջերմ բարեկամը, ինչից շահելու է ե՛ւ Հայաստանը, ե՛ւ Ուկրաինան»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը:

«Հայաստանն ինձ համար հատուկ երկիր է: Այս չորս տարիներին, որ բացակայում էի այստեղից, այնուամենայնիվ ես Հայաստանի հետ էի եւ՝ Սուրբ Էջմիածնի»,- խոստովանեց դեսպանը՝ շեշտելով, որ պաշտոնավարման ընթացքին պետք է հետամուտ լինի հայ-ուկրաինական համագործակցության առավել զորացմանն ու զարգացմանը:

# Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց դիվանատան շենքի հիմնարկեք

Հոկտեմբերի 3-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, կատարվեց ամերիկաբնակ տեր եւ տիկին Նազար եւ Արտեմիս Նազարյանների բարերարությամբ կառուցվող Մայր Աթոռի դիվանատան շենքի հիմնարկեքը: Շենքը նախագծել է ամերիկաբնակ մեծանուն ճարտարապետ Արմանդ Ավագյանը: Դիվանատան նոր շենքում տեղակայվելու են կաթողիկոսական գրասենյակները եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսության արխիվը:



Արարողության ընթացքում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանն ընթերցեց շենքի հիմնադրման հիշատակագիրը, որից հետո Նորին Սրբությունն այն զետեղեց շենքի հիմքում:

Արարողության մասնակիցներին իր օրհնության խոսքն ու պատգամն ուղղեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ այս շինությամբ հնարավորություն է ընձեռվում հասարակական ու ազգային կյանքում, միջեկեղեցական, պետական ոլորտներում առավել ամբողջական եւ արդյունավետ կերպով կազմակերպելու եւ իրականացնելու Հայ եկեղեցու առաքելությունը՝ ի փառս եւ ի շինություն ժողովրդի:

«.... **Մենք վերստին փառք եւ գոհություն ենք առ Աստված բարձրացնում, որ առաջնորդում է մեր Եկեղեցու կյանքը դեպի նոր իրագործումներ ի ծառայություն հավատավոր մեր զավակների: Թող Տերը Իր Աջը հովանի դարձնի հայոց աշխարհի վրա, պահի եւ պահպանի ազգս հայոց սիրո եւ միաբանության մեջ եւ զորացնի մեր մեջ հավատքը եւ ծառայասիրության ոգին՝ անմնացորդ ու անսակարկ նվիրումով բերելու մեր ծառայությունը՝ որպես 1700-ամյա փառքի պատմություն կերտած Հայ Եկեղեցու արժանի սպասավորներ»**,- ասաց Նորին Սրբությունը՝ իր գնահատանքը հայտնելով բարերարներին, շինարարներին ու բոլոր նրանց, ում ջանքերի շնորհիվ կառուցվում է այս նոր շենքը:

## Նոր նշանակումներ

Հոկտեմբերի 11-ից, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, հոգեշնորհ Տ. Մարկոս վարդապետ Հովհաննիսյանը նշանակվել է Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ: Հայրապետական մեկ այլ տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան հոգեշնորհ Տ. Աբգար աբեղա Հովակիմյանը հոկտեմբերի 11-ից հոգեւոր սպասավորության է կոչվել Սյունյաց թեմում՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո:

*Տես՝ էջ 3*

ԳԵՈՐԳ Զ ՉՈՐԵՔՉՅԱՆ
Կաթողիկոս Ամենայն Հայոց
(ծն. 1868, կթղ. 1945-1954 թթ.)

# ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԸ

*«Եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեանն. ամենայն, որ ի ճշմարտութենէ է, լսէ բարբառոյ Իմոյ»*
*(Յովհ. ԺԸ 36-38)*

Բարեպաշտ եղբայրնե՛ր եւ քոյրեր, կան մարդիկ, որոնք ասում են, թէ տեսանելի եւ շօշափելի իրերն են միայն, որ իրապէս գոյութիւն ունին, անտեսանելիներն ու անշօշափելիները բնաւ գոյութիւն չունին. գոյութիւն ունի միայն այն, որ աչքով տեսնում եմ եւ ձեռքով շօշափում:

Ես ընդհակառակն եմ պնդում. անտեսանելին մարդու կեանքի մէջ աւելի մեծ դեր է խաղում, քան տեսանելին: Ես իմ կեանքում համեմատաբար աւելի շատ մարդիկ եմ տեսել, որոնք սիրոյ, հաւատարմութեան եւ բարեկամութեան մէջ, որոնք անտեսանելի են, երջանկութիւն են որոնել եւ գտել, քան դրամի, կայքի եւ գոյքի մէջ, որոնք տեսանելի են: Եւ որովհետեւ անտեսանելին այդքան արժէքաւոր է մեր կեանքի համար, ուստի եւ այսօր կը խօսեմ ձեզ անտեսանելի նիւթի՝ ճշմարտութեան մասին՝ բնաբան առնելով Յովհաննու Աւետարանի խօսքը. «Եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեանն»:



***

Պիղատոսը հարցնում է Յիսուսին. «Յիրաւի Դու Քեզ թագաւո՞ր ես համարում»: Յիսուս պատասխանում է. «Այո՛, թագաւոր եմ»:

Ես էլ եմ պնդում, որ Նա աշխարհի մեծագոյն թագաւորն է: Ֆրանսիայի կայսր խրոխտ Նապոլէոն Առաջինը, որ մեծ եւ խոհուն միտք էր, յաճախ կրկնել է, թէ յիրաւի Յիսուս մեծ մարդ է, որ հազար ութ հարիւր տարիներ սահել անցնելուց յետոյ էլ այսօր միլիոնաւոր մարդիկ պատրաստ են Նրա համար իրենց կեանքը զոհելու:

Պիղատոսը պատուիրում է յանձնել Յիսուսին զինուորներին, որոնք կարմիր շապիկ են հագցնում, ձեռքը տալիս են եղէգնեայ գաւազան եւ գլխին դնում փշեայ պսակ, որով ծաղրում են՝ կամենալով ասել. «Դու թագաւոր չես, այլ միայն հեգնանքն ես թագաւորի»:

Բայց ի՜նչպէս սխալւում են նոքա. տիեզերական պատմութիւնն էլ մարդկային մտքի պատմութիւնն է եղել եւ կը լինի այսուհետեւ: Ձե՛զ կասեմ, զինուորնե՛ր, Նա մեծ եւ իսկական թագաւոր է: Իսկ քե՛զ, Պիղատոս, կասեմ. «Քո հպատակների մէջ Նա հզօրագոյնն ու մեծագոյնն է, որ երբեւիցէ երկիրը տեսել է»: Եթէ Յիսուս թագաւոր է, ապա ո՞ւր է Նրա թագաւորութիւնը՝ անշուշտ կը հարցնէք դուք: Ես պէտք է նշեմ, մատովս ցոյց տամ, որ դուք՝ տաճարում եղողներդ, տեսնէք եւ հաւատիանաք, թէ ճշմարիտ եմ խօսում:

Պիղատոս ասում է. «Դու Իսրայէլի թագաւոր չես, այդ դուն էլ լաւ գիտես... Բայց այնուամենայնիւ, թագաւո՞ր ես»: Յիսուս պատասխանեց թէ՝ «Դուն ես վկայում, որ Ես թագաւոր եմ. ես աշխարհ եմ եկել, որ ճշմարտութիւնը վկայեմ. ահա՛ Իմ թագաւորութիւնը»: Յիսուս ճշմարտութիւնը աշխարհ բերաւ եւ Իր խօսքով ու կեանքով պաշտպանեց այն. ահա այն խոշոր բանը, որ ցուցադրեց Յիսուս. ահա այն զարմանալին ու թագաւորականը, որ հանդէս բերաւ Նա:

Հաւատացեալ եղբայրնե՛ր եւ քոյրեր, երբ մի գիտնական բնութեան շատ գաղտնիքներից մէկը լուծում է, այդպիսիին մենք կոչում ենք գիտութեան թագաւոր: Երբ մի գեղարուեստագէտ՝ մի նկարիչ, մի բանաստեղծ, մի քանդակագործ, պատկերացնում է բնութիւնը իր կուսական գեղեցկութեամբ, գեղեցկութեան թագաւոր ենք անուանում նրան: Ահա այս իմաստով էլ Յիսուս Պիղատոսի առաջ անուանում է Իրեն թագաւոր: Նա ասում է Պիղատոսին, թէ Աստուած Ինձ մի մեծ եւ խոր գաղտնիք է յայտնել, ես էլ նոր գիտ եմ արել՝ աշխարհի դժուարագոյն առեղծուածն եմ լուծել, մարդկութեան համար կարեւորագոյնն եմ գտել եւ Իմ վարդապետութեամբ ու կեանքով ապացուցել այն: Ես պարզել եմ Աստուծոյ, աշխարհի եւ մարդու էութիւնը. այս ճշմարտութիւնը Ես եմ աշխարհ բերել: Ահա՛ Իմ գիւտը:

Յիսուս չի պնդում, թէ Ինքը թագաւոր է, որովհետեւ հրեշտակները Բեթղեհեմում փառաբանեցին Նրան եւ ոչ էլ համարում է Իրեն թագաւոր, որովհետեւ հիւանդներ է բժշկել ու հրաշքներ գործել: Յիսուսի թագաւորութիւնը այս անցած ու հնացած հիմքերի վրայ չէ հաստատուած. Նրա գահը մետաղէ ոտների վրայ է կանգնած, ուստի եւ միշտ էլ հաստատուն կը մնայ: Ես մեծ եւ հզօր թագաւոր եմ, ասում է Յիսուս, որովհետեւ մեծ ճշմարտութիւն եմ աշխարհ բերել:

Պիղատոսը, ուսերը վեր քաշելով, ասաց. «Զի՞նչ է ճշմարտութիւն»: Շատերը այնպէս են կարծում, որ Պիղատոսի այս խօսքերը ծաղր են պարունակում: Իսկ ինձ թւում է, թէ նոքա աչքաթող են անում Աւետարանի այն պատմուածքները, որոնք Պիղատոսի՝ դէպի Յիսուս ունեցած բարեացակամութիւնն են արտայայտում եւ Նրան ազատելու տրամադրութիւն ցոյց տալիս: Եւ ի՞նչ իրաւունք ունինք Պիղատոսին ժամանակի վատագոյն եւ թեթեւամիտ մարդոց շարքը դասելու: Ես տրամադիր եմ հաւատալու, որ Պիղատոսը թէեւ թոյլ, բայց լուրջ մարդ էր եւ այդ խօսքերը արտասանած չէր լինի ժպիտը երեսին՝ քմծիծաղով, այլ իր ժամանակի լուրջ անձանց նման՝ վշտոտ դէմքով. «Երանի թէ մարդ իմանար, թէ ի՛նչ է ճշմարտութիւնը»:

Քրիստոնեա՛յ եղբայրներ, երբ անցնում է երիտասարդութիւնը եւ գալիս առնական հասակը, մարդ նոր է սկսում ըմբռնել կեանքի լրջութիւնը եւ առեղծուածային բնոյթը եւ լրջօրէն զբաղւում այդ հարցով: Կեանքի մարդը, այն է՝ ուտող-խմողը եւ հաճոյասիրութեամբ ժամանց ունեցողը, չի նկատում ո՛չ կեանքի լրջութիւնը եւ ո՛չ էլ նրա հանելուկային բնոյթը: Բայց մենք, որ լրջութեան սահմանն ենք թեւակոխել, կամենում ենք իմանալ, թէ ի՛նչ է ճշմարտութիւնը:

Հին ժամանակներից ի վեր մարդիկ հետախուզել են իմանալու այն... Եգիպտոսում՝ մեծ անապատի եզրին, հին ժողովուրդները, որոնք հնագոյն ժամանակներից այնտեղ ապրել են, կանգնել են քարէքանդակ հրաշալի յուշարձաններ: Նոքա պատկերացնում են պառկած առիւծներ՝ լուրջ եւ հպարտ կնոջ գլխով ու կրծքով: Նոքա քանի մի հազար տարիներէ ի վեր լուռ եւ սեւեռեալ հայեացքով նայում են անապատին: Ով տեսնում է նոցա, եթէ լուրջ մարդ է, զգում է, որ այդ առեղծուածային մարմինները եւ այդ սեւեռեալ հայեացքները ասում են. «Շուրջդ ամէն ինչ գաղտնիք է եւ խաւար, խե՛ղճ մարդ. չգիտես դու քո ծագումը, քո ներկան եւ քո վախճանը: Դու չես ճանաչում ո՛չ աշխարհը եւ ո՛չ Աստծուն: Մինչեւ իսկ քե՛զ չես ճանաչում, տխմա՛ր արարած: Դու չես ըմբռնում մարդկային կեանքի եւ աշխարհի ստեղծագործութեան ճշմարտութիւնը»: Ուստի Պիղատոսից չպիտի ղժգոհել: Պիղատոսի խօսքը՝ «Զի՞նչ է ճշմարտութիւն», յաճախ արտասանել են շատ լուրջ մարդիկ հին ժամանակներից մինչեւ այսօր:

Գերմանացի բանաստեղծ-փիլիսոփայ Լեսսինգը ասել է. «Եթէ մի օր Աստուած երեւէր ինձ եւ ասէր թէ՝ «Աջ ձեռքումս ճշմարտութիւնն է, իսկ ձախումս՝ ճշմարտութեան որոնումը. ո՞րը կը կամենայիր», ես կընտրէի ձախն ու կասէի. «Տէ՛ր, տո՛ւր ինձ ճշմարտութեան որոնումը, որովհետեւ ճշմարտութիւնը միայն Քեզ է պատկանում»:

Իմ ըմբռնմամբ՝ մի շատ խելօք խօսք է, որ նրա արիասիրտ հեղինակին մեծ պատիւ է բերում:

*Շարունակելի*

ՄԱՐԿՈՍ ՃԳՆԱՎՈՐ
(Ե դար)

# ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԽՈՍՔ ՀՈԳԵՎՈՐ ՕՐԵՆՔԻ ՄԱՍԻՆ

1. Քանի որ դու հաճախ հարցրել ես, թե ինչ նկատի ունի առաքյալը, երբ ասում է. «Օրենքը հոգեւոր է» (Հռոմ. Է 14), եւ ինչպիսի հոգեւոր գիտություն ու գործեր են հատուկ նրանց, ովքեր կամենում են այն ունենալ, ըստ կարելվույն կխոսենք այս մասին:

2. Նախ՝ մենք գիտենք, որ Աստված է սկիզբը, միջինն ու վերջը ամենայն բարու, եւ անհնար է, որ հավատանք որեւէ բարի բանի կամ կատարենք այն առանց Հիսուս Քրիստոսի եւ Սուրբ Հոգու:

3. Ամեն բարի բան Աստծուց տրված է նախախնամորեն, եւ ով հավատում է, որ սա այսպես է, չի կորցնի իրեն տրվածը:

4. Հաստատուն հավատը հզոր աշտարակ է, եւ հավատ ունեցողի համար Քրիստոսն ամեն ինչ է:

5. Թող Նա, ով սկիզբն է դնում ամեն բարի բանի, սկիզբը դնի քո ձեռնարկած ամեն ինչի, որպեսզի ամեն ինչ Նրա օրհնությամբ կատարվի:

6. Խոնարհին ու հոգեւոր կյանքով ապրողը Սուրբ Գիրքը կարդալիս կհամարի, որ ամեն ինչ իրեն է վերաբերում եւ ոչ թե մի ուրիշի:

7. Խնդրիր Աստծուն բանալ սրտիդ աչքերը, որպեսզի տեսնես աղոթքի եւ հոգեւոր ընթերցանության արժեքը, երբ կարդացածը հասկացվում եւ գործադրվում է:

8. Եթե մարդը մի հոգեւոր շնորհ է ստացել եւ կարեկցանքի զգացում ունի նրանց հանդեպ, ովքեր այդ շնորհը չունեն, իր կարեկցանքի շնորհիվ պահպանում է այն, մինչդեռ սնափառը, սնափառության փորձություններին տրվելով, կկորցնի այն:

9. Խոնարհ մարդու բերանը ճշմարտությունն է խոսում. իսկ ով խոսում է ճշմարտության դեմ, նման է այն ծառային, ով ապտակեց Տիրոջը (Մարկ. ԺԴ 65):

10. Աշակերտ մի՛ դարձիր ինքնագովին, չլինի թե խոնարհության փոխարեն հպարտություն սովորես:

11. Մի՛ հպարտացիր Սուրբ Գրքի քո բացատրություններով, որպեսզի չլինի թե միտքդ աստվածհայհոյության զոհ դառնա:

12. Մի՛ փորձիր որեւէ դժվարին բան վիճաբանությամբ բացատրել, այլ այնպես, ինչպես հոգեւոր օրենքն է պահանջում՝ համբերությամբ, աղոթքով եւ աներեր հույսով:

13. Կույր է այն մարդը, ով աղաղակում է՝ ասելով. «Որդի՛ Դավթի, ողորմի՛ր ինձ» (Ղուկ. ԺԸ 38): Նա դեռեւս միայն մարմնով է աղոթում եւ ո՛չ հոգեւոր գիտությամբ:



14. Երբ նա, ով մի ժամանակ կույր էր, վերագտավ տեսողությունը եւ տեսավ Տիրոջը, այլեւս չխոստովանեց Նրան իբրեւ Դավթի որդի, այլ Աստծո՛ Որդի եւ երկրպագեց Նրան (Հովh. Թ 38):

15. Մի՛ հպարտացիր, երբ աղոթելիս արտասվում ես: Որովհետեւ այդ Քրիստոսն է, որ դիպել է աչքերիդ եւ քեզ հոգեւոր տեսողություն պարգեւել:

16. Ով կույրի նման, դեն նետելով իր հագուստը, մոտենում է Տիրոջը, դառնում է Նրա աշակերտը եւ ճշմարիտ վարդապետության քարոզիչ (հմմտ. Մարկ. Ժ 50):

17. Չարը խորհելը դարձնում է միտքը պղնձյա, իսկ չարն ինքնազսպմամբ ու հույսով ոչնչացնելը փշրում է սիրտը:

18. Կա սրտի փշրում, որ մեղմ է եւ սիրտը խորապես զղջացող է դարձնում, եւ կա փշրում էլ, որ կոպիտ ու վնասակար է եւ ամբողջապես ցնցում է սիրտը:

19. Արթնությունը, աղոթքը եւ համբերատար ընդունումն այն ամենի, որ հասնում է մեզ, առաջ են բերում փշրվածություն, որ սրտին չի վնասում, այլ օգտակար է, եթե, իհարկե, մենք չափազանցությամբ չենք վերացնում նրանց միջեւ եղած հավասարակշռությունը: Ով հարատեւում է սրանց մեջ, ուրիշ տեսակ օգնություններ եւս կստանա, իսկ ով ծույլ ու անտարբեր է, այս կյանքին հրաժեշտ տալիս անտանելիորեն կտանջվի:

20. Հեշտասեր (հաճույքասեր) սիրտը դառնում է հոգու բանտ ու կապանք, երբ վերջինս հեռանում է այս աշխարհից, մինչ ջանասեր սիրտը բաց դուռ է:

21. Դեպի քաղաք տանող երկաթե դարպասը (Գործք ԺԲ 10) կարծր սիրտն է, բայց նեղություն ու դժվարություն կրողի համար դարպասն ինքն իրեն կբացվի, ինչպես պատահեց Պետրոսի հետ:

22. Կան աղոթքի կատարման տարբեր եղանակներ, որոնցից ոչ մեկն էլ վնասակար չէ, այլապես դա աղոթք չէր լինի, այլ սատանայի գործ:

23. Մի մարդ ցանկացավ չարիք գործել եւ սովորականի պես նախ աղոթեց. եւ Աստծո արգելքին հանդիպելով՝ այնուհետեւ չափազանց շնորհակալ եղավ Նրան:

*Շարունակությունը՝ էջ 6*

# ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՐԿՈՒ «ԲԻՆԳՅՈԼ» - Ը



*Սկիզբը՝ էջ 5*

Սիրո եւ գեղեցկության, ազատության ու ազգային հավաքականության մեծագույն երգիչներից մեկը դատապարտված էր հնչեցնելու ազգային մենակության, տառապանքի ու ողբերգության քնարը, իր խոր հիասթափությունն ու ցասումնալից բողոքն արտահայտելու անարդար աշխարհի դեմ:

«Արագին» (1901, Վիեննա) բանաստեղծությունն այդ բողոքի սուր արտահայտություններից մեկն է: Անձնավորված Արագը՝ նույն Բյուրակնյան լեռներից՝ բինգյոլյան ակունքներից սկիզբ առնող հայոց սրբազան գետը, «Մեր սրտերեն, խոր աչերեն Արուն քամեր, քանի՜ հարյուր - հարյուր տարի կերթա»՝ աշխարհի «անգութ խղճին միշտ զարնելու».

*... Ա՜խ, աշխարհը անխղճմտանք*
*Քեզ չի գըթա, ազիզ - Արա՛զ,*
*Քու բողոքին, քու մորմոքին*
*Չի էլ լըսի, արնոտ Արազ.*
*Մեր սարերեն, խոր սըրտերեն*
*Տըխուր-տրտում կերթա՛ս, Արազ.*
*Ա՛յ սարեր, Հայ ձորեր,*
*Ձմրուխտի սարե՛ր.*

*Դուն էլ, Արազ մեր արունով*
*Էս աշխարհի խղճի վրա*
*Դիզվի՛ր, դարձիր սեւ - դառըն ծով,-*
*Թո՛ւյն ու արո՛ւն, ազիզ Արա՛զ.*
*Ա՛յ սարեր, Հայ սարե՛ր,*
*Ջա՛ն անուշ սարե՛ր,*
*Ալմաստի սարե՛ր...*

«Արագին» բանաստեղծությունն, իհարկե, նկատելի որոշակի աղերսներ ունի թե՛ նախորդ, թե՛ հաջորդ «Բինգյոլների» հետ, սակայն երկրորդ «Բինգյոլին» առնչակից է նաեւ 1908 թ. գրված «Դու չես հասկանա» բանաստեղծությունը, որը նույնպես մենակության դատապարտված, բազմախոց ու վիրավոր հայության խորունկ վշտի, անփարատելի ցավի աղաղակն է՝ ուղղված անարդար ու անտարբեր աշխարհին.

Իմ մոր սուրբ խոսքը՝ ծաղրի նշավակ,
Իմ հայրենիքը - սիրտըս ու հոգիս -
Եվ հոշոտում են, պղծում ոտնատակ.
Դու չես ըմբռնի անդունդը վշտիս:

Ես՝ զավակ ճնշված ու փոքրիկ ազգի,
Սրտիս արյունով մեծ վիշտս եմ գրում.
Վերքը անդարման իմ հայրենիքի
Իմ բյուր խոցոտված սրտումս եմ կրում:

Սիրել, երազել, թռչել եմ ուզում,
Բայց շղթան ինձ պինդ գամել է գետնին,
Կուռ լուծը ազգիս՝ ուսերս է փշրում,
Չես կարող հասնել իմ անափ վշտին:

Տիեզերական զայրույթով, թույնով
Արդ՝ ես ինքս ինձ խայթում եմ ահա,
Թո՛ղ մեռնիմ, կորչիմ անհետ, անանուն.
Իմ անհույս վիշտը դու չես հասկանա...

Ժողովրդի ու հայրենիքի ողբերգության թեման, որ սկզբից էլ, ժամանակներին ու իրադարձություններին համապատասխան, իր յուրահատուկ մարմնավորումն էր ստացել Ավ. Իսահակյանի քնարերգության մեջ («Հայդուկի երգեր» շարքում, այդ շարքից դուրս գրված բազմաթիվ բանաստեղծություններում), շարունակվեց նրա ստեղծագործական ուղու հետագա փուլերում՝ հայրենիքից արտաքսվելու, Մեծ Եղեռնի դժնդակ ժամանակներում, օտար հորիզոններում թափառելու եւ Խորհրդային Հայաստան վերադառնալու տարիներին *(Այս համապատկերում մեզ, մեղմ ասած, տարօրինակ է թվում, թե ինչու 1940 թ. Երեւանում Իսահակյանի գրած՝*

***Ուրիշների ջրերն ընկած՝ գնացի,***
***Հրամաններ կատարելով գնացի,***
***Շատ ջանացի, որ սրտիս հետ ընթանամ,***
***Աշխարհի հետ թավալգլոր գնացի***

քառյակի տակ դրվել է **1940, Ժընեւ** տարեթիվն ու գրության տեղը, երբ 1936 թ. դեկտեմբերի 4-ին Փարիզից Հայաստան վերադարձած Ավ. Իսահակյանը այնուհետեւ մինչեւ իր կյանքի վերջը՝ 1957 թ. հոկտեմբերի *17-ը, արտասահման, այն էլ Ժընեւ, չի գնացել եւ չէր էլ կարող գնալ):*

Վարպետը դեռեւս 1924 թ.՝ Լենինի մահվան լուրն առնելուց անմիջապես հետո, Վարդգես Ահարոնյանին հասցեագրած նամակներից մեկում, վերաբերմունք արտահայտելով, գրում է, թե «բոլշեւիզմի բոլոր շեֆերը պիտի սատկին Լենինի պես», որովհետեւ ինքը հասկացել ու համոզվել է, որ «քանի դեռ բոլշեւիզմը կա, Հայաստանի վրա ոչ միայն մի թիզ հող անգամ չի ավելանալու, այլեւ եղածն էլ բաժանելու են իրենց մուսուլման եղբայրներին»:

Այդ ժամանակներից առաջ էլ, հետո էլ, Իսահակյանի բանաստեղծությունների, «Հիշատակարանի», նամակների, ծոցատետրային գրառումների այրող տողերը վկա, կորուսյալ հայրենիքը նրա ստեղծագործության մեջ մարմնավորվում էր մերթ Անիի, մերթ Բինգյոլի, մերթ Արեւմտյան Հայաստանի այլեւայլ խորհրդանշական ու սրբազան տեղանունների պատկերներով: Առաջին «Բինգյոլը» նույնպես այդպիսի գաղափարական նպատակամետում ուներ, սակայն դա, ինչպես վերն արդեն տեսանք, դրախտային հայրենիքի իդեալական կեցությունն էր խորհրդանշում Բինգյոլի գեղարվեստականացված պատկերով:

Երկրորդ «Բինգյոլը»՝ «Երբ բաց եղան զարնան կանաչ դռները» սկսվածքով, գրված 1940 թ., բոլորովին այլ խորհուրդ ու նպատակադրում ունի: Այս բանաստեղծության բովանդակային խորքերում այլաբանական պատկերներով ներկայացված է մարդկության պատմությանն արդեն քաջ հայտնի խորհրդային դարաշրջանն ու իրավակարգը, ուր «ժողովուրդների հոր» բարեհոգությամբ ոչ միայն մարդու, այլեւ ամբողջ ժողովուրդների, ազգերի ու ազգությունների իրավունքներն էին ոտնահարվում ու բռնաբարվում: Հեղինակն այդ երկրում իրոք զրկված էր բացախոսության որեւէ հնարավորությունից, անգամ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ամենայն Հայոց Վեհափառի հետ նրա հանդիպումն էր արժանացել դատապարտության ու հանդիմանանքի: Նրա ամեն խոսք ու արտահայտություն ստուգվում էր գլավլիտային միկրոսկոպով, ուստի կենսական ճշմարտության բացահայտմանը նպատակամիտված ամեն տող, ամեն բառ ու պատկեր պիտի ունենար որոշակի ներքառուն, անքռնելի ենթիմաստ: Ուզում ենք ընթերցողին հիշեցնել, թե ի՛նչ նպատակով էր Ավ. Իսահակյանը 1926 թ. «Անի» բանաստեղծությունը տպագրել «Երվանդ Մովսիսյան» ստորագրությամբ, ինչո՛ւ էր նա 1937 թ. Երեւանում գրած «Ժողովրդի քնարը» ստեղծագործությունն անվանել 18-րդ դարի սերբական լեգենդ, իսկ գրվածքի տեղն ու թիվն էլ նշել «Ժընեւ, 1917»:

Մի պարզ բացատրություն ունի դա. որպեսզի անմիջաբար հասկանալի չլիներ, որ բանաստեղծության մեջ կերպավորված հերոսներից մեկը՝ սերբ ժողովրդի արյունը խմող բուրք Արդուլլահ փաշան, ոչ ավել ոչ պակաս Ստալինն ինքն է, ծեր գուսլար Միրկոն, որին պարտադրում են հյուսել բռնակալի «փառքի դաստանը», իր բանտարկված ու մահվան դատապարտված զավակների փրկությամբ մտահոգ երգիչ Իսահակյանն ինքն է, իսկ Միրկոյի՝ ցցի հանվող զավակները՝ 1937-ին բանտարկված ու ստույգ մահվան դատապարտված Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Վահան Թոթովենցը եւ սրանց եղերաբախտակիցները:

Ինչպես արտասահմանում ապրած տարիներին, այնպես էլ խորհրդային ժամանակներում Ավ. Իսահակյանի սրտից ու մտքից չէին հեռանում սուրբ գաղափարի համար նահատակված իր մարտական ընկերները, «Հայդուկի երգեր» շարքում կերպավորված ազատագրական պայքարի նահատակ ու հերոս քաջամարտիկները, մասնատված ու կորստյան դատապարտված սրբազան հայրենիքը, Եղեռնի միլիոնավոր անմեղ նահատակներն ու խորհրդային բռնատիրության 1937 թ. զոհերը: Ահա ինչու նա առանձնահատուկ կարեւորություն էր տալիս հայրենիքի թեմային եւ այն մարմնավորելիս էլ հաճախ հարկադրված էր դիմում այլասացության, ալեգորիկ խորհրդանշական պատկերների (ի դեպ, սա որեւէ առնչություն չունի սիմվոլիզմի գրական ուղղության կամ, ինչպես ընդունված է ասել, հոսանքի հետ): Այս հանգամանքներում, ահա, մեր ժողովրդագուսանական բանաստեղծության ու առհասարակ հայ քնարերգության մեջ, որպես ողջ Արեւմտյան Հայաստանը մարմնավորող խորհրդանշական պատկերներ, գործածվում էին հայոց նվիրական տեղանունները՝ Արարատ - Մասիսը, Ալագյազը, Վան եւ Վասպուրականը, Բինգյոլը, Անին, Մուշը, Կարինը, Երզնկան եւ այլն *(Այսպես պետք է հասկանալ Ջիվանու երգերից մեկում*

***Տիգրանակերտ, Մուշ, Բայազետ, դեպի Վան***
***Ուղարկեցի հայոց զորքեր պահապան:***
***Ե՞րբ պիտի տեսնեմ Խարին նստած հայ իշխան՝***
***Հայ տառերով գրեր հայոց հրաման***

տողերում գործածված տեղանունների խորհրդանշական արժեքը):

*Շարունակելի*

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

*Սկիզբը՝ էջ 6*

Նարեկացուն ավելի մոտ էր Արծրունյաց թագավորության մշակութային վերելքը: Նրա աչքի առջեւ էին Աղթամարը՝ Սուրբ Խաչ հոյակերտ տաճարով, մյուս շինություններով: Աղթամարն, ըստ Անանուն Մատենագրի, ասես երկրորդ Երուսաղեմը լիներ: Շինարարական աշխատանքները իրականացվել են 915-921 թվականներին Մանվել ճարտարապետի ձեռքով: Նարեկացու գիտակցական կյանքը զուգադիպեց մի կողմից՝ Արծրունյաց, մյուս կողմից՝ Բագրատունյաց հարստության բարձրացմանը:

Անին, որ իր անունն ստացել է Բարձր Յայքի Դարանաղյաց գավառի Անի բերդաքաղաքից, որ եղել է հեթանոս հայերի կրոնական կենտրոն, որպես մայրաքաղաք հռչակվեց 961 թվականից, երբ Բագրատունիներն իրենց կենտրոնը Կարսից տեղափոխեցին Նորակառույց այդ քաղաքը: 964-ին Աշոտ Գ Ողորմած թագավորը կառուցեց հզոր պարիսպը, որի շինարարությունը շարունակվեց 989-ին: Անին ծաղկեց Գագիկ Ա-ի (989-1020) թագավորության տարիներին, երբ կառուցվեցին Անիի մայր տաճարը, Գագիկաշեն եւ մյուս եկեղեցիները: Ճնշման [illegible] Գագիկ Ա-ի որդին՝ Յովհաննես Սմբատը, 1021-ին Անին կտակեց բյուզանդացիներին: Անիի հանձնման կտակը իրականացվեց Պետրոս Գետադարձ վեհափառի եւ Վեստ Սարգիս իշխանի կողմից: 1045-ին Անին վերջնականապես բյուզանդական ենթակայության քաղաք էր:

Ճարտարապետական այդ կոթողները համաշխարհային քաղաքակրթության բացառիկ արժեքներ են: Նարեկացին այդ մշակութային միջավայրի ծնունդ էր եւ արժանիորեն իր խոսքի արվեստը հասցրեց այդ բարձրությանը:

Քարագործ վարպետներն ասես Նարեկացու խոսքի իմաստն են վերածել ճարտարապետության՝ տաճարի, սյունաշարի, գմբեթի ու խոյակի: Իսկ Նարեկացին իր խոսքի մեջ արդեն իսկ ուներ այդ ճարտարապետության տրվածքը: Նրա խոսքի խարիսխը, հիմքը նույնքան ամուր է, որքան տաճարինը: Երկուսի ամրությունն էլ գալիս է հավատի զորությունից: Երկուսի արվեստն էլ գալիս է նույն բնաշխարհից. բառը քարանում էր որպես պատկեր, քարը խոսում ու երգում էր որպես բառ:

Նարեկացին ինքն է գրում. «Եվ սկսելով ողբերգությունն այս աղերսանքներիս ես հավատքի շենքը պիտի կառուցեմ» (Ժ, Բ): Այնուհետեւ տող առ տող ուրվագծում է «հավատքի շենքի» ճարտարապետությունը. «Պարփակիր քո ձեռքով առաստաղը տաճարիս. Գծագրիր քո արյունով սեմը սենյակիս մուտքի. Դրոշմիր քո նշանը աղոթյալիս ճանապարհին, Ամրացրու քո աջով խշտյակն իմ հանգստի...» (ԺԲ, Գ): Առկա են իր խոսքը ճարտարապետական կառույցի հետ համեմատող բազմաթիվ արտահայտություններ եւս. «Կառույցը պահող սյունն ահա ընկավ, Բարձրության վստահարանը կործանվեց» (ԻԴ, Բ), «Կառուցումներն աստվածաբնակ խորանների» (ԼԱ, Բ), «Ինչպես նաեւ կաթուղիկե եկեղեցու կատարյալ շինության համար» (ԼԴ, Բ): Իսկ «Մատյան ...»-ի «Յիշատակարան ...»-ն ավարտվում է այսպիսի տպավորիչ խոսքերով. «... երբ վերջապես ոտնակոխ ոչնչացան եկեղեցու թշնամիները՝ ձեռնարկեցի, կառուցեցի, շարակարգեցի, հավաքեցի, քանդակեցի, դիզեցի, բարդեցի, կանգնեցի եւ գլուխ բերի բազմարդյուն այս գիրքը՝ միատարր՝ հրաշակերտության մեջ, դնելով դրվագներ բազմաստեղնյան...»:

Ինչո՞վ Նարեկացու «Մատյան ...»-ը Աղթամարի մի նոր Սուրբ Խաչ կամ Անիի մի նոր Մայր տաճարը չէ... Նույն հոգեւոր արժեքներն են՝ արվեստի տարբեր ձեւեր ընդունած:



***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# «Սբ. Սահակ - Սբ. Մեսրոպ» շքանշան Աղասի Այվազյանին



Հոկտեմբերի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ շքանշանի հանձնման արարողություն: Ամենայն Հայոց Հայրապետը, ծննդյան 80-րդ տարեդարձի առիթով, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սբ. Սահակ Սբ. Մեսրոպ» պատվո բարձր շքանշանով պարգեւատրեց արձակագիր, հրապարակախոս Աղասի Այվազյանին՝ հայ ժողովրդին ու Հայրենիքին մատուցած ծառայությունների ու վաստակի համար:

Ա. Այվազյանի գործունեության ու վաստակին անդրադարձավ Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը պարգեւի համար եւ անդրադարձավ Մայր Աթոռի եւ Գրողների միության միջեւ առկա սերտ համագործակցությանը:

Հայրապետական սրբատառ կոնդակն ընթերցեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը:

**«... Հավատավոր հոգով ու որդիական նվիրումով աստվածատուր գրական Ձեր շնորհը ու բոլոր ջանքերը տարիներ շարունակ Դուք անմնացորդ ծառայեցրել եք հայ մշակույթին, մեր Հայրենիքին ու ժողովրդին, եւ Ձեր ստեղծագործություններն իրենց արժանի տեղն ունեն արդի հայ գրականության հարուստ անդաստանում: Մեր ժողովուրդը միշտ գնահատանքով է ընդունել Ձեր պատմվածքները, վիպակներն ու հրապարակախոսությունները, որ համակված են սիրով ու հավատարմությամբ մեր ազգային արժեքների ու հայրենի ժառանգության հանդեպ: Մեծ ճանաչում ունեն մանավանդ Ձեր սցենարներով նկարահանված կինոնկարները, որոնք հայ կինոարվեստը ներկայացնող գործեր են եւ սիրվելու ու արժեւորվելու են նաեւ հետագա սերունդների կողմից»**, - ասված է հայրապետական կոնդակում:

Կոնդակի ընթերցումից հետո Ամենայն Հայոց Հայրապետը մեծարյալի կուրծքը զարդարեց «Սբ. Սահակ - Սբ. Մեսրոպ» շքանշանով:



«Ձեր օրհնությունը շատ մեծ նշանակություն ունի ինձ համար: Այս շքանշանի հանձնումը անակնկալ էր ինձ համար եւ մեծ պատիվ», - ասաց պրն. Այվազյանը՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը բարձր պարգեւի համար:

Իր հայրապետական օրհնությունը ներկաներին ուղղեց նաեւ Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: **«Նախախնամական ենք համարում, որ այս պարգեւի հանձնումը կատարվում է այսօր, երբ տակավին ապրում ենք խորհուրդը մեր մեծ թարգմանիչ վարդապետների, որոնց տոնը մենք տոնախմբեցինք երեկ: Այսօր Հայ Եկեղեցու մեծագույն սրբերի՝ Սուրբ Սահակի, Սուրբ Մեսրոպի շքանշանը զարդարում է ձեր կուրծքը՝ ի գնահատություն ձեր ծառայության, որ դուք իրականացրել եք ազգային մեր կյանքում, մաշտոցյան գործը շարունակելով մեր ժողովրդի կյանքից ներս, կրթելով, սնելով, դաստիարակելով հայորդիների ներկա սերնդին»**,- նշեց Նորին Սրբությունը՝ մաղթելով Տիրոջ գործակցությունը վաստակաշատ գրողին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# Այս հմուտ, հանճարեղ Լոռեցին...



Թումանյանագիտությունը հարստացավ եւս մի արժեքավոր ու ինքնատիպ աշխատությամբ. օրերս լույս տեսավ («Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում) «Հովհաննես Թումանյան. Հայրենագիտական համանվագներ» գիրքը, որի հեղինակը ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Շախկյանն է: Վարչական, կոմունալ, հանգստի, հուշային եւ այլ բնույթի բազում շինությունների, հայ ճարտարապետության տեսությանն ու պատմության հիմնախնդիրներին նվիրված տասնակ գրքերի, հարյուրավոր գիտական-մասնագիտական հոդվածների հեղինակ Շախկյանն այս անգամ, ճարտարապետության խնդիրներից ոչ պակաս լրջությամբ ու բանիմացությամբ, անդրադարձել է իր մեծ հայրենակցի՝ հանճարեղ Լոռեցու բնաշխարհագիտական, պատմական, բանահյուսական, ճարտարապետական-հնագիտական, կարճ ասած՝ հայրենագիտական ներդրումներին: Մինչ ուսումնասիրության բուն նյութին անցնելը, «Ա՜խ, ինչ սքանչելի խոսք է. Եղիցի լո՜յս...» խորագրի տակ, որպես առաջաբան, հեղինակը համառոտ, բայց միանգամայն խոսուն կերպով փորձում է մեկ անգամ եւս արժեւորել Թումանյան հանճարի դերն ու տեղը ոչ միայն հայ իրականության մեջ, այլեւ համամարդկային մտքի անդաստանում՝ վկայակոչելով նաեւ թումանյանագիտության մեծ երախտավորների՝ Ա. Ինճիկյանի, Էդ. Ջրբաշյանի, Լ. Հախվերդյանի, Հր. Թամրազյանի, ինչպես նաեւ Եղիշե Չարենցի, Ավետիք Իսահակյանի,Պարույր Սեւակի, Հրանտ Մաթեւոսյանի կարծիքները:

«Հայրենիքի սերը ծնվում է հարազատ բնակավայրի նկատմամբ ունեցած սիրուց եւ այն ուղեկցում է մարդուն իր ողջ կյանքում՝ ակնհայտ դրոշմ դնելով նրա կերպարի եւ գործունեության վրա: Երեւի թե այդ նկատի ունի Գյոթեն, երբ ասում է՝ «Ով ուզում է ճանաչել գրողին, պետք է լինի նրա հայրենիքում»: Հայոց բոլոր մեծերն էլ անպայմանորեն նաեւ հայրենագետներ են.... բայց Հովհաննես Թումանյանն այդ առումով առանձնահատուկ է. հայրենագիտությունը նրա ստեղծագործություններից անբաժան է, դրանց հետ միահյուսված, շաղախված, եւ դժվար է միանշանակ որոշել, թե ինչ դեր է կատարել եւ ինչ տեղ է գրավում այն նրա կյանքում եւ ստեղծագործություններում»,- գրքի առաջաբանում գրում է Շախկյանը: Խորապես գնահատելով թումանյանագիտության հատկապես վերջին տասնամյակների ձեռքբերումները՝ նա իր ուշադրությունը հիմնականում սեւեռել է մեծ գրողի բնաշխարհագիտական, տոհմաբանական, բանասիրական, ճարտարապետական ժառանգության ուսումնասիրությանը՝ մեծապես կարեւորելով դրանք ոչ միայն Թումանյանի աշխարհին ու ստեղծագործությունը լավագույնս ճանաչելու, այլեւ մեր ժողովրդի մտածողության, նրա այս մոլորակի վրա ապրելու առաքելության խորհուրդը հասկանալու, արժեւորելու առումով:

Մեջբերելով Հ. Թամրազյանի այն խոսքերը, թե՝ «Բանաստեղծը նման է արարիչ Աստծուն, այսինքն՝ նա էլ գործ ունի քաոսի հետ, նա էլ ձգտում է քաոսից ստեղծել մարդին ու աշխարհ, նա էլ ուզում է լույս աշխարհ բերել իր ստեղծագործությունը: Միայն թե Աստված կարգավորում է տիեզերական քաոսը, իսկ բանաստեղծը գործ ունի իր հոգու փոթորկման քաոսային վիճակի հետ... Ամեն ինչ կախված է այն բանից, թե հեղինակը կարո՞ղ է արդյոք սանձել այդ փոթորիկը եւ լույս նետել քաոսի վրա, մարմնավորել իր մտահղացումները»՝ Շախկյանը դրանք միանգամայն իրավացիորեն վերաբերեցնում է Թումանյանին՝ շեշտելով, « որ նա եղավ իր ժամանակի ամենազոր անհատը, ով կարողացավ ամենամեծ ներդրումը կատարել քաոսային վիճակի կարգավորման, փոթորկալից մրրիկների մեղմման, համազգային շռնդալից հնչողության գրական ու հասարակական մտահղացումների իրականացման ուղղությամբ»: Ապա ամփոփում խոսքն իր գրելաոճին բնորոշ պատկերայնությամբ. «Տեսե՞լ եք գարնան հորդառատ անձրեւից առաջ կայծակի հզոր շաչյունը, ամպրոպի ահեղագոչ որոտը, անձրեւից հետո լազուր երկինքը գոտեւորող ծիածանի գունեղ բոցավառումը... Այդպես բուռն ու հախուռն եղավ Թումանյանի հրաշքը հայոց Պառնասի եւ «մըթնած» իրականության երկնակամարում՝ շինչ ու զուլալ հետք թողնելով հայոց բազմադարյան մշակույթի անդաստանում, հույս ու պայծառություն ներարկելով նիրհի եւ ընդդարմության մեջ գտնվող ժողովրդին՝ սերունդներին առնելով իր լուսավոր ծիրի մեջ»:





*Թումանյանի ծնողները*

Ավելացնենք նաեւ, որ աշխատությունը գրված է անթերի եւ մեր օրերի համար ուսանելի հայերենով, ամբողջացած բազմաթիվ հետաքրքիր լուսանկարներով, որոնցից շատերը տպագրվում են առաջին անգամ, ինչպես նաեւ Թումանյանի տոհմածառով, որը կազմել է հենց ինքը՝ հեղինակը, որն ինքնին ահռելի աշխատանք է:

*Ռ. ԱՐՈՅԱՆ*



*Թումանյանը կնոջ եւ զավակների հետ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի ՔԿ եւ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԿ

**հեռախոս՝**
**(0+231) 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. տպագր. 17.10.2005 թ.

**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**